



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

21 հունվարի, 2022թ.

Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար» ծրագրի շրջանակներում 2021թ-ի մարտ-նոյեմբեր ամիսներին իրականացվել է «Գիտելիքների բազայի, կլիմայի փոփոխության ռիսկերի և խոցելիության գնահատում և մարզային հարմարվողականության ծրագրի մշակման» աշխատանքը Շիրակի և Տավուշի մարզերի համար:

Աշխատանքի հիմնական նպատակներն էին.

- Հավաքագրել և ուսումնասիրել մարզի սոցիալ-տնտեսական տվյալները, մարզերի համար իրականացված խոցելիության գնահատականները, դրանց մեջ կիրառված մեթոդաբանությունը/տվյալները, կանխատեսումները և այլն,
- Գնահատել Շիրակի ու Տավուշի մարզերի խոցելիությունը կլիմայի փոփոխության հանդեպ,
- Մշակել մարզերի հարմարվողականության ծրագրեր (ՄՀԾ):

Աշխատաժողովի նպատակն է ներկայացնել և շահագրգիռ կողմերի հետ քննարկել Տավուշի և Շիրակի մարզերի համար կլիմայական խոցելիության գնահատման արդյունքները, խոցելիության նվազեցմանը և հարմարվողականության կարողության բարձրացմանն ուղղված առաջարկվող միջոցառումները:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ
ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ամսաթիվը՝ 21 հունվարի, 2022թ.

Վայրը՝ ք. Երևան. «Արմենիա Մարիոթ» հյուրանոց, «Արարատ» սրահ (Ամիրյան փ. 1)

Ձևաչափ՝ Աշխատաժողովը տեղի կունենա հիբրիդային ձևաչափով: Աշխատաժողովին կարելի է մասնակցել նաև առցանց՝ միանալով <https://undp.zoom.us/j/85011427486> հղումին:

ՕՐԱԿԱՐԳ
(նախագիծ)

11:30-12:00	Մասնակիցների գրանցում, սուրճ	
12:00-12:15	Բացման խոսք	ՇՄՆ ՏԿԵՆ ՄԱԶԾ
12:15-12:25	- Հարմարվողականության ազգային ծրագրի իրականացումը Հայաստանում - Կլիմայի փոփոխության միտումներն ու կանխատեսումները Հայաստանում	ՄԱԶԾ
12:25-12:40	Մարզային հարմարվողականության ծրագրի մշակման մեթոդաբանությունը	Մարտիրոս Ծառուկյան, «ԳԵՈՌԻՍԿ» ՓԲԸ
12:40-13:10	Շիրակի և Տավուշի մարզերի խոցելիության գնահատման արդյունքները	Մարտիրոս Ծառուկյան, «ԳԵՈՌԻՍԿ» ՓԲԸ
13:10-13:40	Հարց ու պատասխան	
13:40-14:30	Ճաշի ընդմիջում	
14:30-14:40	Գենդերային առանձնահատկությունների ներառումը խոցելիության գնահատման և հարմարվողականության պլանավորման գործընթացներում	Զարուհի Տոնոյան, «ԳԵՈՌԻՍԿ» ՓԲԸ
14:40-15:00	Տավուշի մարզի հարմարվողականության առաջարկվող միջոցառումներ	Պետրոս Թոզալաքյան, «ԳԵՈՌԻՍԿ» ՓԲԸ
15:00-15:20	Շիրակի մարզի հարմարվողականության առաջարկվող միջոցառումներ	Պետրոս Թոզալաքյան, «ԳԵՈՌԻՍԿ» ՓԲԸ
15:20-15:50	Քննարկում, հարց ու պատասխան, առաջարկներ	
15:50-16:00	Ամփոփում, սուրճ	